

**ԲԱԺԻՆ 2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ**

ՀՏԴ 316.775.4

DOI: 10.53068/25792997-2024.2.12-51

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ՝ COVID-19-Ի
ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

*Վ. Ա. Աբովյան, Կ. Էդ. Ղուլյան, Ն. Յու. Զաքարյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: COVID-19, համավարակ, տեղեկատվություն, ապատեղեկատվություն, պատվաստում, տեղեկատվական աղբյուրներ, վստահություն:

Հետազոտության արդիականություն: 2020 թվականի մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարեց նոր, արագ տարածվող, ծանր սուր շնչառական համախտանիշով՝ կորոնավիրուս-2-ով (SARS-CoV-2) պայմանավորված հիվանդության՝ COVID-19-ի բռնկման մասին: Մինչ օրս ԱՀԿ-ը հաստատել է COVID-19-ի 772 138 818 դեպք [7]: COVID-19-ից մահվան դեպքերը դեռ շարունակում են աճել և վերջին 9 ամիսների ընթացքում ամբողջ աշխարհում այդ թիվը 6,9 միլիոնից հասել է 7 միլիոնի [20,21,22]: 2020 թվականից սկսած՝ ՀՀ-ում գրանցվել է COVID-19-ի 451 831 դեպք և 8777 մահ [23]:

Իր բարդություններով, քիչ ուսումնասիրվածությամբ և զանգվածային տարածմամբ COVID-19-ը ձեռք բերեց ոչ միայն բժշկամանկավարժական, այլև տնտեսաքաղաքական և տեղեկատվական մեծ ընդգրկում: Հիվանդության ծագման (աղբյուրների), դրա դեմ պայքարի, ավելի ուշ՝ պատվաստանյութերի ներդրման վերաբերյալ տեղեկատվական դաշտը ժամանակի ընթացքում անընդմեջ փոփոխվում էր, հաճախ՝ խիստ հակասական լինելով, ինչն էլ հանգեցրեց տեղեկատվական ճգնաժամի: Տեղեկատվության մեծ հոսքը, բնակչության շրջանում առկա անորոշությունը, գիտելիքների պակասը, վախը, վիրուսի արագ տարածումը հանգեցրին ինչպես ճշգրիտ տեղեկատվության, այնպես էլ ապատեղեկատվության տարածմանը:

Հիմք ունենալով մեդիայից կախվածության տեսությունը՝ կարելի է հաստատել, որ մեդիայի համակարգն առանձնահատուկ սոցիալական նշանակություն

է ստանում պատմության կրիտիկական պահերին՝ տնտեսական ճգնաժամերին, բնական աղետների, քաղաքական ցնցումների և սոցիալական կոնֆլիկտների ընթացքում: Այդպիսի ժամանակաշրջանում անորոշության և հոգեբանական անկազմակերպվածության մակարդակներն աճում են, անհատներն օբյեկտիվորեն առավել կախված են դառնում մեղիամիջավայրից: COVID-19-ի համավարակի ընթացքում մեղիան տեղեկատվության միակ (անձնական փորձին զուգահեռ) աղբյուրը և կորոնավիրուսի բովանդակության ու դրա դեմ պայքարի հեռանկարների մասին պատկերացումների ձևավորման զգալիորեն որոշիչ միջոց էր [5]:

Ժամանակակից տեղեկատվական միջավայրի պայմաններում COVID-19-ի մասին «ճշմարիտ տեղեկատվություն» ապահովելը բավականին բարդ էր: Համավարակի հետ կապված՝ տեղեկատվական սպառման ինտենսիվացումը լրատվության ավանդական միջոցներին (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ) դիմելուց բացի, զուգորդված էր համացանցին դիմելով: Ընդ որում՝ այս դեպքում ուշադրության էին արժանանում ոչ միայն զանգվածային տեղեկատվական ռեսուրսները, այլև, ամենից առաջ՝ սոցիալական ցանցերը: Համացանցում տեղեկատվության հետ միասին արագ տարածվում էր նաև ապատեղեկատվություն և ոչ միայն COVID-19-ի վերաբերյալ [17,24]: Համացանցից ավելի հաճախ օգտվում էին երիտասարդները (18-45 տարեկան),

որոնք տարեցների համեմատ ունեին զգալիորեն ավելի բարձր անհանգստություն, դեպրեսիա, սթրես և առավել զգայուն էին ապատեղեկատվության նկատմամբ [6,16,18,19]: SARS-CoV-2 կորոնավիրուսի և դրա տարբերակների, COVID-19 հիվանդության, պատվաստանյութերի, բուժման մեթոդների և ընդհանրապես առողջապահական խնամքի մատուցման մասին ապատեղեկատվությունը COVID-19 համավարակին ուղեկցող բնորոշ գծերն էին [10]: Փաստենք նաև, որ շատ մարդիկ, այդ թվում՝ բժիշկներն ու առհասարակ առողջապահական ոլորտի աշխատողները, սոցիալական հարթակներն օգտագործում են ոչ միայն տեղեկատվություն ստանալու, այլև իրենց անձնական կարծիքը կիսելու համար, ինչը ոչ միշտ է հիմնված լինում գիտական տեղեկատվության վրա, այդպիսով խորացնում է ապատեղեկատվության տարածումը [14]:

Ըստ «Պրիզմա» հետազոտական և վերլուծական ընկերության 2023թ.-ի օգոստոսին անցկացված հետազոտության՝ քանակական տվյալները ցույց են տվել, որ հայկական մեդիայով տրամադրվող տեղեկատվությունը որոշ չափով կամ ամբողջությամբ արժանահավատ համարող բնակչության մասնաբաժինը զգալիորեն նվազել է՝ 2023 թվականին հասնելով 49,0%-ի՝ 2021 թվականի 73,0%-ի համեմատ: Միաժամանակ՝ որակական ուսումնասիրությունները հաստատել են

լրատվամիջոցների նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակը և այլընտրանքային աղբյուրների նկատմամբ վստահության բարձր մակարդակը, ինչը պայմանավորված է պաշտոնական լուրերի արժանահավատության պակասով [3]:

Հայաստանյան փորձագետների գնահատմամբ՝ հեռուստատեսությունն ու տպագիր թերթերն աստիճանաբար ավելի քիչ վստահելի են դառնում հանրության համար՝ ի հակադրություն առցանց լրատվամիջոցների, որոնք բազմազանության ապահովման ճկուն քաղաքականության արդյունքում լսարանի համար քիչ շոշափելի են դարձնում քաղաքական նպատակները: Բացի այդ, առցանց լրատվամիջոցներն ընդլայնվում են սոցիալական ցանցերի դաշտում, իսկ այդտեղ հաճախ ավելի կարևոր է նորությունը կիսող «հեղինակը», քան այդ տեղեկատվությունը: Այնուամենայնիվ, հարցվածների զգալի մասը վստահության չունի ոչ մի տեսակի սոցիալական մեդիայի նկատմամբ (51%), հեռուստաընկերությունների նկատմամբ մինչև 32%-ը, իսկ հանրային ռադիոն վստահելի է համարել 9%-ը [2]:

Ավանդական տեղեկատվական աղբյուրները, մասնավորապես հեռուստացույցը, շարունակում են մնալ կարևոր և ամենաշատ օգտագործվող տեղեկատվական աղբյուրների թվում, իսկ բժիշկների տրամադրած տեղեկատվությունն ոչ միայն կարևոր է, այլև՝ ամենավստահելին, www.sportedu.am

ընդ որում՝ առանձին երկրներում վստահության մակարդակը համեմատաբար կայուն է և նույնիսկ աճ է գրանցել համավարակի վաղ փուլերում [1,13,15]: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բարձրագույն կրթություն ունեցողները (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմ, անձնակազմ) ու նրանց ընտանիքի անդամներն առավել հակված են գնահատելու գիտության դերը և մեծ վստահություն ունեն գիտության և գիտնականների նկատմամբ [11]: Աշխարհում, ընդհանուր առմամբ, բնակչության վստահությունը կառավարությունների նկատմամբ նվազել է. օրինակ՝ Կանադայում կառավարության նկատմամբ վստահությունն ամենաանկայունն է, եվրոպական մի շարք երկրներում կան զգալի տարբերություններ վստահության մակարդակներում, ընդ որում՝ COVID-19 համաճարակի ընթացքում ավելի բարձր ինստիտուցիոնալ վստահություն ունեցող երկրները հայտնել են մահացության ավելի քիչ դեպքերի մասին [8,12]: Հետազոտությունների արդյունքները փաստում են, որ քաղաքականության և գիտության նկատմամբ վստահության պահպանումն ու ամրապնդումն առանցքային դեր ունեն COVID-19 համաճարակի հաղթահարման համար [9]:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել տեղեկատվական աղբյուրների օգտագործման առանձնահատկությունները COVID-19-ի համավարակի ընթացքում:

Հետազոտության խնդիրները:

1. Պարզել COVID-19-ի համավարակի ընթացքում առողջապահական տեղեկատվություն ստանալու հիմնական ու հասանելի աղբյուրները և բացահայտել դրանց նկատմամբ վստահության մակարդակը:

2. Բացահայտել ուսանողների վերաբերմունքն ու վարքագիծը COVID-19-ի պատվաստանյութերի նկատմամբ:

Հետազոտության մեթոդներ և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ գրական աղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում, առերես հարցաթերթիկային հարցում:

Հետազոտությունն անցկացվել է 2023թ.-ի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, մասնակցության համար պարտադիր պայմաններ են եղել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (ՀՖԿՍՊԻ) առկա կամ հեռակա ուսուցման համակարգի ուսանող լինելը և մասնակցության պատրաստակամությունը: Նախապես կազմված, փորձնական հարցում իրականացված և արդյունքում՝ բարեփոխված հարցաթերթիկներով [4] կատարվել է դեմ առ դեմ հարցում՝ 396 ուսանողների շրջանում: Հարցաթերթիկը կազմված էր երեք բաժիններից. ընդհանուր տեղեկություն, COVID-19-ով հիվանդացություն և պատվաստում, համավարակի ընթացքում օգտագործած տեղեկատվական աղբյուրներ

և դրանց նկատմամբ վստահության մակարդակ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Կորոնավիրուսային համավարակի հետ կապված գլոբալ իրավիճակը հստակ ցույց տվեց համաշխարհային քաղաքականության սահմանափակումներն ու թերությունները և հարցեր բարձրացրեց համաշխարհային առողջապահական համակարգի թուլության վերաբերյալ՝ հատկապես ընդգծելով զարգացող երկրների անապահովությունն արտակարգ իրավիճակներում:

Չնայած նրան, որ համավարակն այսօր ընդհանուր առմամբ նահանջել է, այն ավարտված համարել չի կարելի: COVID-19-ի կամ մեկ այլ նոր հիվանդության հետագա բռնկումները նման կլինե՞ն ամենամյա գրիպին, թե՞ ապագայում մարդկությունը կհանդիպի նոր մուտացիաների կամ ինֆեկցիոն նոր հիվանդությունների՝ աճող վիրուլենտությամբ, ցույց կտա ժամանակը: Սակայն փաստ է, որ COVID-19-ի համավարակն ազդեց բնակչության կյանքի գործնականորեն բոլոր ոլորտների վրա և հանգեցրեց մարդկային վարքի աննախադեպ վերափոխումների:

Առավել հետաքրքիր է երիտասարդների վերաբերմունքի և վարքի առանձնահատկությունների ուսումնասիրումը ՀՀ-ում՝ համավարակի ընթացքում: Հետազոտվողների ընդհանուր բնութագրերը ներկայացված են 1-ին աղյուսակում:

Հարցաթերթիկային հարցմանը մասնակցել են մինչև 22 տարեկան 302 ուսանողներ, որոնք կազմել են ընդհանուր հարցվածների 76,3%-ը, իսկ մնացած 23,7%-ը կազմել են 23 տարեկան և բարձր տարիքի ուսանողները:

Աղյուսակ 1.

Հետազոտության մասնակիցների ընդհանուր բնութագիրը (N = 396)


Հարցվածների թվաքանակ		Ընդհանուր՝ 396	Երևան՝ 118	Այլ մարզեր՝ 278
Սեռ	արական	314 (79,3%)	82 (20,7%)	232 (58,6%)
	իգական	82 (20,7%)	36 (9,1%)	46 (11,6%)
Տարիքային կազմ	մինչև 22 տարեկան	302 (76,3%)	88 (22,2%)	214 (54,0%)
	23 տարեկան և բարձր	94 (23,7%)	30 (7,6%)	64 (16,2%)
Ընտանեկան կարգավիճակ	ամուսնացած	42 (10,6%)	14 (3,5%)	28 (7,1%)
	չամուսնացած	354 (89,4%)	104 (26,3%)	250 (63,1%)
Զբաղվածույթ- յուն, աշխա- տանքային ուղրոտ	հողագործություն, անասնապահություն, անտառապահություն	40 (10,1%)	4 (1,0%)	36 (9,1%)
	արդյունաբերություն, շինարարություն	46 (11,6%)	4 (1,0%)	42 (10,6%)
	գրասենյակային աշխատանք, մտավոր աշխատանք, ծառայությունների մատուցում	68 (17,2%)	16 (4,0%)	52 (13,1%)
	մարզական ակումբ, ֆիթնես մարզասրահ, առողջապահական հաստատություն	112 (28,3%)	52 (13,1%)	60 (15,2%)
	ուժային կառույց	6 (1,5%)	2 (0,5%)	4 (1,0%)

Բացի Երևանից, մյուս մարզերում բնակվող հարցվածների 37,9%-ը գյուղաբնակներ են: Հետազոտության մասնակիցներից զբաղվածություն ունեցողները կազմել են 68,7%, որոնց 19,7%-ը www.sportedu.am

բնակվում են Երևանում, 49,0%-ը՝ մարզերում:

Ուսումնասիրվել է ուսանողների վարքագիծն ու վերաբերմունքը՝ կապված COVID-19-ի դեմ պատվաստման հետ: 1-


ին տրամագրում ներկայացված են COVID-19-ի դեմ պատվաստված և այդ պատվաստմանը դեմ ուսանողների ընդհանուր թվաքանակը՝ անկախ հիվանդացությունից:



Տրամագիր 1. COVID-19-ի դեմ պատվաստվածների և բացասական վերաբերմունք ունեցողների թվաքանակը՝ տրկոսներով

2-րդ տրամագրում առանձնացված են COVID-19-ով վարակված և չվարակված հարցվածների վարքագիծը և վերաբերմունքը՝ կապված պատվաստման հետ, ընդ որում՝ հարցման արդյունքների համաձայն COVID-19-ով հիվանդացել են 114 ուսանողներ (28,8%): Պատվաստմանը

դեմ վերաբերմունք ունեցողների բարձր ցուցանիշը վկայում է այն մասին, որ պատվաստվածների մեծամասնությունը պատվաստվել է ինչ-որ հանգամանքից ելնելով, օրինակ՝ պայմանավորված դրա պարտադիր լինելով և այլն, ոչ թե սեփական ցանկությամբ:



Տրամագիր 2. COVID-19-ով վարակվածների և չվարակվածների վարքագիծը՝ կապված պատվաստման հետ

Հետազոտությանը մասնակցած ուսանողների 83,3%-ը (այդ թվում՝ 24,8%-ը երևանաբնակ և 58,6%-ն՝ այլ մարզերի բնակիչներ) նշել է, որ համավարակի ողջ ընթացքում իրենց հասանելի է եղել տարբեր աղբյուրներից COVID-19-ի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալը: Հարցման արդյունքում պարզել ենք համավարակի ընթացքում ուսանողների կողմից առողջապահական տեղեկատվական աղբյուրների օգտագործման հաճախականությունը:

Ըստ «Պրիզմա» հետազոտական և վերլուծական ընկերության տվյալների՝ YouTube-ը, Facebook-ը և Instagram-ը, ինչպես նաև WhatsApp և Viber խմբերը շարունակում են մնալ (նաև ըստ 2021թ.-ի հետազոտության) Հայաստանում ամենից շատ օգտագործվող սոցիալական հարթակները (ամբողջ բնակչության 58-59,0%-ն օգտագործում է օրական մի քանի անգամ):

Հայկական հեռուստաալիքներն ու հայկական լրատվական կայքերը՝ որպես ամենահաճախ օգտագործվող աղբյուրներ, երկրորդ տեղում են (օրական մի քանի անգամ այցելում են հարցվածների, համապատասխանաբար՝ 41,0%-ը և 36,0%-ը) [3]:

Գրեթե համանման պատկեր է գրանցվել մեր կողմից անցկացված հետազոտության արդյունքում (աղյուսակ 2):

Համավարակի ընթացքում հեռուստատեսությունն առանձնացել է որպես տեղեկատվություն ստանալու ամենահաճախ օգտագործվող աղբյուր և՛ Երևանում (118 հարցվածներ)՝ 74,6%, և՛ մյուս մարզերում (278 հարցվածներ)՝ 66,2%: Երկրորդ տեղում հայտնվել են սոցիալական ցանցերը՝ 57,1%՝ առանց Facebook-ի (միայն Facebook-ը՝ 33,3%), իսկ երրորդում՝ հարցվածների հարազատները, ընկերները, աշխատակիցներն ու հարեկանները՝ 52,5%:

Աղյուսակ 2.

COVID-19-ի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու աղբյուրները և վստահությունը դրանց նկատմամբ (N = 396)

Տեղեկատվության աղբյուր	Օգտվողներ (ուսանող)	Վստահության մակարդակը (ուսանող)
հեռուստատեսություն	272 (68,7%)	174 (43,9%)
սոցիալական այլ ցանցեր (Instagram, TikTok, Telegram)	226 (57,1%)	82 (20,7%)
հարազատներ, ընկերներ, աշխատակիցներ, հարևաններ	208 (52,5%)	114 (28,8%)

առողջապահության նախարարության կայք	152 (38,4%)	114 (28,8%)
Facebook	132 (33,3%)	42 (10,6%)
տեղեկատվական այլ կայքեր	128 (32,3%)	50 (12,6%)
ծանոթ բժիշկ	112 (28,3%)	116 (29,3%)
տեղամասային թերապևտ / ընտանեկան բժիշկ	58 (14,6%)	44 (11,1%)
լրագրեր	40 (10,1%)	18 (4,5%)
ռադիո	40 (10,1%)	18 (4,5%)
առողջապահական ամսագրեր	24 (6,1%)	18 (4,5%)
չեն վստահել ոչ մի աղբյուրի	18 (4,5%)	

Հայտնի է, որ պատկերացումների ձևավորման գործում, նույնիսկ կայուն իրավիճակներում, մեդիայի հեղինակությունը հաճախ ավելի փոքր դեր է խաղում, քան միջանձնային շփումները: Ծգնաժամի հետ կապված, որի առարկան է մարդկանց առողջությունն է, դա առավել ևս այդպես է. պաշտոնական մեդիայի ճնշման պայմաններում քաղաքացիները բացի հարազատներին և մտերիմներին դիմելուց, առավել ակտիվ դիմում են ծանոթ բժիշկներին: Ընդ որում՝ քանզի հետազոտությունն անցկացվել է ուսանողների շրջանում, որոնք ի տարբերություն տարեցների, գրեթե չեն դիմում առողջության առաջնային պահպանման օղակին (տեղամասային պոլիկլինիկա), համավարակի ընթացքում ևս՝ ավելի հաճախ օգտվել են ծանոթ բժշկի խորհրդատվությունից (28,3%), քան տեղամասային թերապևտի (14,6%): Հարկ ենք համարում նշել նաև, որ ծանոթ բժշկին դիմել են երևանաբնակների 32,2%-ը, իսկ մյուս

մարզերի ուսանողների 26,6%-ը, մինչդեռ տեղամասային կամ ընտանեկան բժշկին դիմելու հարցում դիտվել է հակառակ պատկեր, համապատասխանաբար՝ 10,2% և 16,5%:

Համավարակի ընթացքում ռադիոյից, լրագրերից և առողջապահական ամսագրերից COVID-19-ի վերաբերյալ տեղեկատվություն ստացել են հարցվածների համապատասխանաբար 10,1%-ական և 6,1%-ը:

Տեղեկատվության ծավալի աճի, աղբյուրների բազմազանության արդյունքում վստահությունը հաղորդակցային միջոցի հանդեպ դառնում է առանցքային: 2020-ին լոքդաուն հայտարարվեց և տեղեկատվության առատ հոսքի հետ հայտնվեց նաև կեղծ տեղեկատվություն: Ուստի, տեղեկատվական աղբյուրների հանդեպ վստահությունը դարձավ հրատապ խնդիր:

Համավարակի ընթացքում տեղեկատվական աղբյուրների նկատմամբ www.sportedu.am

վստահության մակարդակի ուսումնասիրության արդյունքները ներկայացված են 2-րդ աղյուսակում, որի համաձայն՝ հեռուստատեսությունը կրկին եղել է առաջատար դիրքում՝ 43,9%, որին հաջորդել են՝ վստահությունը ծանոթ բժշկի հանդեպ՝ 29,3%, առողջապահության նախարարության կայքն ու հարազատներին, ընկերներին, աշխատակիցներին և հարևաններին՝ դիմելը՝ 28,8%-ական, սոցիալական ցանցերը՝ 20,7%՝ առանց Facebook-ի (միայն Facebook՝ 10,6%), տեղեկատվական տարբեր կայքեր՝ 12,6%: Հետաքրքիր է, որ երևանաբնակների (N=118) և այլ մարզերում բնակվողների (N=278) պատասխաններն առանձին-առանձին վերլուծելիս աղբյուրի արժանահավատության մակարդակի վերոնշյալ հերթականությունը փոխվում է, բացառությամբ՝ առաջնահերթություն ստացած աղբյուրի՝ հեռուստատեսության, համապատասխանաբար՝ 50,8% և 41,0%: Որպես երկրորդ վստահելի աղբյուր՝ հետազոտվող երկու խմբերում էլ նշել են առողջապահության նախարարության կայքը՝ Երևանում՝ 38,9%, մյուս մարզերում՝ 35,3%: Իրենց արժանահավատությամբ երևանաբնակ ուսանողների կողմից կարևորվել են նաև ծանոթ բժիշկը՝ 33,9%, հարազատները, ընկերները, աշխատակիցները, հարևանները՝ 30,5% և սոցիալական ցանցերը՝ 28,8%: Մյուս մարզերի ուսանողները որպես տեղեկատվության աղբյուր վստահել են հարազատներին, ընկերներին, աշխատակիցներին

www.sportedu.am

և հարևաններին՝ 28,1%, ծանոթ բժշկին՝ 27,3% և կրկին սոցիալական ցանցերին՝ 17,3%:

Տեղեկատվական մյուս աղբյուրների նկատմամբ վստահությունը և՛ Երևանի, և՛ մյուս մարզերի հարցվածների շրջանում կազմել է 10,1%-ից ցածր:

Եզրակացություններ և առաջարկություններ.

Սպառողների կարիքները վերհանելիս՝ առողջությունն ու բարեկեցությունը մշտապես առանձնանում են որպես մեղիա բովանդակության ամենապահանջված թեմաներ, ուստի առողջապահական տեղեկատվությունը համարվում է ամենակարևոր գործիքը: Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողները՝ որպես տեղեկատվության աղբյուր մեծ մասամբ օգտվել են հեռուստատեսությունից և միաժամանակ վստահել են հեռուստատեսային տեղեկատվությանը: Հետևաբար, պետք է արձանագրել, որ որպես տեղեկատվության առաջնային և հասանելի աղբյուր՝ հեռուստատեսային տեղեկատվությունը պետք է լինի մատչելի, հասկանալի, թափանցիկ և, իհարկե, հնարավորինս ստույգ:

Համավարակի հետ կապված ճգնաժամի ընթացքում առողջապահության նախարարության կայքը, որպես տեղեկատվության աղբյուր, ձեռք է բերել համեմատաբար բարձր վստահություն: Պետք է խնդիր դնել պահպանել այն և ժամանակի ընթացքում հասնել նրան, որ բնակչությունը նման իրավիճակներում,

բացի պաշտոնական կայքից, այլ աղբյուրների դիմելու կարիք չունենա:

Առողջության առաջնային պահպանման օղակին դիմելու հարցում պատկերն անհանգստացնող է: Հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ ծանոթ բժշկիկների նկատմամբ վստահության մակարդակը մոտ 3 անգամ բարձր է եղել տեղամասային թերապևտին/ ընտանեկան բժշկին դիմելու մակարդակից, ուստի

բնակչության առողջության առաջնային պահպանման օղակի դերը դեռևս ցածր է:

Ուսումնասիրելով COVID-19-ով վարակված և չվարակված (ենթադրաբար) ուսանողների վերաբերմունքը COVID-19-ի դեմ պատվաստմանը՝ պարզ է դառնում, որ երկու դեպքում էլ նրանց 1/3 մասը համավարակի ընթացքում պատվաստվել են՝ ելնելով դրա պարտադիր լինելուց:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբովյան Վ.Ա., Հիմնական քրոնիկական ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ բնակչության իրազեկման աղբյուրները, «Մարդու առողջություն» VIII ազգային գիտաբժշկական կոնգրեսի նյութերի ժողովածու /միջազգային մասնակցությամբ/, 2009, Երևան, էջ 33-36

2. ԶԼՄ լսարանի վստահությունը. միտումներ/ «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 7, 2013. http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12292 (մուտք 21.03.24թ)

3. Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն: Օգոստոս 2023, «Պրիզմա» հետազոտական և վերլուծական ընկերություն:

4. Методы социологического исследования: Учебное пособие для студентов и аспирантов. Составитель: кандидат социологических наук Калашаова. Д.А. - Майкоп. 2016. С.162

5. Назаров М.М., Иванов В.Н., Кублицкая Е.А., Социальные представления о covid-19 в условиях нестабильной информационной среды (исследование середины 2021 года). / Вестник РУДН. Серия: Социология. - 2022. Т. 22. № 2. С. 275–290

6. Aïmeur E, Amri S, Brassard G. Fake news, disinformation and misinformation in social media: a review. Soc Netw Anal Min. 2023;13(1):30. doi: 10.1007/s13278-023-01028-5. Epub 2023 Feb 9. PMID: 36789378; PMCID: PMC9910783.

7. Atuheirwe, M., Otim, R., Male, K.J. et al. Misinformation, knowledge and COVID-19 vaccine acceptance: a cross-sectional study among health care workers and the general population in Kampala, Uganda. BMC Public Health 24, 203 (2024). <https://doi.org/10.1186/s12889-024-17678-9>

8. Burns, K.E., Brown, P., Calnan, M. et al. Development and validation of the Trust in Government measure. *BMC Public Health* 23, 2023 (2023). <https://doi.org/10.1186/s12889-023-16974-0>
9. Dohle S, Wingen T, Schreiber M. Acceptance and adoption of protective measures during the COVID-19 pandemic: the role of trust in politics and trust in science. *Social Psychol Bull.* 2020;15(4).
10. Edward Prewitt, MPP, Namita Seth Mohta, MD, Lisa Gordon and Thomas H. Lee, MD, MSc, Combating Misinformation as a Core Function of Public Health, *NEJM Catal Innov Care Deliv* 2023;4(2), DOI: 10.1056/CAT.23.0013
11. Nicolo, M., Kawaguchi, E., Ghanem-Uzqueda, A. et al. Trust in science and scientists among university students, staff, and faculty of a large, diverse university in Los Angeles during the COVID-19 pandemic, the Trojan Pandemic Response Initiative. *BMC Public Health* 23, 601 (2023). <https://doi.org/10.1186/s12889-023-15533-x>
12. Oksanen et al., Regulation and Trust: 3-Month Follow-up Study on COVID-19 Mortality in 25 European Countries. *JMIR Public Health Surveill.* 2020 Apr 24;6(2):e19218. doi: 10.2196/19218. PMID: 32301734; PMCID: PMC7184967
13. Pécout C, Pain E, Chekroun M, Champeix C, Kulak C, Prieto R, van Vugt J, Gilchrist K, Lainé-Pellet AF. Impact of the COVID-19 Pandemic on Patients Affected by Non-Communicable Diseases in Europe and in the USA. *Int J Environ Res Public Health.* 2021 Jun 22;18(13):6697. doi: 10.3390/ijerph18136697. PMID: 34206293; PMCID: PMC8297015.
14. Rossi, M.M., Parisi, M.A., Cartmell, K.B. et al. Understanding COVID-19 vaccine hesitancy in the Hispanic adult population of South Carolina: a complex mixed-method design evaluation study. *BMC Public Health* 23, 2359 (2023). <https://doi.org/10.1186/s12889-023-16771-9>
15. Skirbekk, H., Magelssen, M. & Conradsen, S. Trust in healthcare before and during the COVID-19 pandemic. *BMC Public Health* 23, 863 (2023). <https://doi.org/10.1186/s12889-023-15716-6>
16. Stanton R, To QG, Khalesi S, Williams SL, Alley SJ, Thwaite TL, Fenning AS, Vandelanotte C. Depression, Anxiety and Stress during COVID-19: Associations with Changes in Physical Activity, Sleep, Tobacco and Alcohol Use in Australian Adults. *Int J Environ Res Public Health.* 2020 Jun 7;17(11):4065. doi: 10.3390/ijerph17114065. PMID: 32517294; PMCID: PMC7312903.
17. Suarez-Lledo V, Alvarez-Galvez J. Prevalence of Health Misinformation on Social Media: Systematic Review. *J Med Internet Res.* 2021 Jan 20;23(1):e17187. doi: 10.2196/17187. PMID: 33470931; PMCID: PMC7857950.

18. Vrdelja M, Vrbovšek S, Klopčič V, Dadaczynski K, Okan O. Facing the Growing COVID-19 Infodemic: Digital Health Literacy and Information-Seeking Behaviour of University Students in Slovenia. *Int J Environ Res Public Health*. 2021 Aug 12; 18(16):8507. doi: 10.3390/ijerph18168507. PMID: 34444255; PMCID: PMC8394972.

19. Zhang, Y., Zhang, L., Guan, H. et al. The impact of internet health information seeking on COVID-19 vaccination behavior in China. *BMC Public Health* 24, 89 (2024). <https://doi.org/10.1186/s12889-024-17638-3>

20. WHO. COVID-19 weekly epidemiological update: edition 155 published 10 August 2023. 2023. <https://www.who.int/publications/m/item/weekly-epidemiological-update-on-covid-19> (մուտք 03.05.24թ)

21. [https://www.who.int/news-room/fact-sheets/detail/coronavirus-disease-\(covid-19\)](https://www.who.int/news-room/fact-sheets/detail/coronavirus-disease-(covid-19)) (մուտք 03.05.24թ)

22. <https://www.worldometers.info/coronavirus/> (մուտք 03.05.24թ)

23. <https://www.worldometers.info/coronavirus/country/armenia/> (մուտք 03.05.24թ)

24. <https://www.factcheck.org/2020/02/fake-coronavirus-cures-part-2-garlic-isnt-a-cure/> (մուտք 07.01.24թ)

THE FREQUENCY OF USE OF INFORMATION SOURCES AMONGST STUDENTS DURING THE COVID-19 PANDEMIC

*V. A. Abovyan, K. Ed. Ghulyan, N. Yu. Zakaryan
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: COVID-19, pandemic, information, misinformation, vaccination, information sources, trust.

Research relevance: The relevance of the study of the social consequences of COVID-19 is due to the fact that this phenomenon affected various aspects of human society.

Research aim and problems: The purpose of the research is to study the features of the use of information sources during the COVID-19 pandemic.

The problems of the research are:

1. to identify the sources of medical information obtained during the COVID-19 pandemic and determine the level of trust in it.

2. to reveal the attitude of students towards vaccination against COVID-19 and their actions.

Research methods and organization: The research methods are: Study, analysis and generalization of scientific and methodological literature, an in-person questionnaire survey.

The article presents the results of a questionnaire survey Carried out in 2023 on the topic of corona virus disease. A voluntary survey of 396 students of the State Institute of Physical Culture and Sports of Armenia was Carried out using the developed questionnaire.

Conclusion: As a result of the study, it turned out that most students trust television as a source of information. Therefore, it should be noted that television, as the main and accessible source, should convey intelligible and as accurate information as possible. During the pandemic crisis, the website of the Ministry of Health of the Republic of Armenia gained relatively high authority as a source of information. It should be a task to maintain it and to achieve over time the fact, that the population does not need to turn to sources other than the official website in such situations.

The picture of referring to the primary health care link is disturbing. According to the results of the research, it became clear that the level of trust towards familiar doctors is about 3 times higher than the level of referring to local therapist/family doctor, so the role of the primary health care link of the population is still low.

Examining the attitude of (presumably) uninfected and infected students with COVID-19 to vaccination against COVID-19, it becomes clear that in both cases, 1/3 of them were vaccinated under compulsory conditions during the pandemic.

ЧАСТОТА ИСПОЛЬЗОВАНИЯ ИСТОЧНИКОВ ИНФОРМАЦИИ СРЕДИ СТУДЕНТОВ ВО ВРЕМЯ ПАНДЕМИИ COVID-19

*В. А. Абовян, К. Эд. Гулян, Н. Ю. Закарян
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова. COVID-19, пандемия, информация, дезинформация, вакцинация, источники информации, доверие.

Актуальность исследования социальных последствий COVID-19 обусловлена тем, что это событие затронуло разнообразные стороны человеческого общества.

Цель исследования: изучить особенности использования источников информации во время пандемии COVID-19.

Задачи исследования:

1. Выявить источники врачебной информации, полученной во время пандемии COVID-19, и определить уровень доверия к ней.

2. Выяснить отношение студентов к вакцинации от COVID-19 и их действия.

Методы и организация исследования. Изучение, анализ и обобщение научно-методической литературы, очный анкетный опрос.

В статье представлены результаты анкетного опроса, проведенного в 2023 году на тему коронавирусной болезни. Был проведен добровольный опрос 396 студентов Государственного института физической культуры и спорта Армении с использованием разработанного вопросника.

Анализ результатов исследования. В результате исследования выяснилось, что большинство студентов доверяют телевидению - как источнику информации. Поэтому следует зафиксировать, что телевидение, как основной и доступный источник, должно передавать доходчивую и максимально точную информацию.

Во время кризиса пандемии сайт Минздрава РА, как источник информации, завоевал относительно высокий авторитет. Существует задача поддержать его, чтобы населению не приходилось обращаться в таких ситуациях к другим источникам, кроме официальных.

Краткие выводы. По результатам исследования стало ясно, что уровень обращений к врачам по знакомству примерно в 3 раза выше уровня доверия участковым терапевтам/семейным врачам, поэтому роль первичного звена медико-санитарной помощи населения по-прежнему невысока.

При изучении отношений (предположительно) незараженных и инфицированных COVID-19 студентов к вакцинации, установлено, что в обоих случаях 1/3 из них были вакцинированы по принудительным условиям, во время пандемии.

Տեղեկություններ հեղինակների մասին

Վարդան Արտավազի Արովյան՝ ք.գ.թ., Ֆիզիկական վերականգնման ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail:vardan.abovyan@sportedu.am

Կարինե Էդուարդի Ղուլյան՝ տ.գ.թ., Բժշկական սաբանական գիտությունների ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail:karine.ghulyan@sportedu.am

Նազելի Յուրիկի Զաքարյան՝ տ.գ.թ., Բժշկականսաբանական գիտությունների ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail:nazeli.zakaryan@sportedu.am

Information about the authors

Vardan Artavazd Abovyan, PhD, Associate Professor of the Chair of Physical Rehabilitation, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: vardan.abovyan@sportedu.am

Karine Eduard Ghulyan, PhD, Associate Professor of the Chair of Medical and Biological Sciences, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: karine.ghulyan@sportedu.am

Nazeli Yurik Zakaryan, PhD, Associate Professor of the Chair of Medical and biological Sciences, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: nazeli.zakaryan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 26.06.2024–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 27.06.2024–ին:

Գրախոս՝ մ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբյան